ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՈՒՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍԵԴԱ ՀԱՄԱՅԱԿԻ

ԱՆՁԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄՆԵՐԸ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

ԺԹ. 00.01- «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ- 2018

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում

Գիտական ղեկավար՝ Հոգեբանական գիտությունների դոկտոր
Նաիրա Ռաֆիկի Հակոբյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Հոգեբանական գիտությունների դոկտոր
Սամվել Սուրենի Խուդոյան

Հոգեբանական գիտությունների թեկնածու
Սյուզի Ֆելիքսի Սարգսյան

Առաջատար կազմակերպություն՝ **ՀՀ պետական կառավարման ակադեմիա**

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2018թ. հունիսի 05-ին ժամը 13^{00}–ին, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանին առընթեր գիտական աստիճաններ շնորհող ԲՈՀ-ի հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է մայիսի 04-ին:

Հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի քարտուղար, հոգեբանական գիտությունների դոկտոր՝ **Կամո Երեմի Վարդանյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Ժամանակակից հասարակության պայմաններում կարգավիճակային տեղաշարժերն ունեն լայնածավալ բնույթ: Ընդ որում՝ դրանք կարող են տեղի ունենալ վերընթաց (սոցիալական կարգավիճակի բարձրացում) և վարընթաց (սոցիալական կարգավիճակի անկում) ուղղվածությամբ: Ներկայումս առավել մեծ մասշտաբներ են ձեռք բերել կարգավիճակային վարընթաց տեղաշարժերը, երբ տարբեր մասնագիտությունների ներկայացուցիչներ հայտնվում են սահմանային, միջանկյալ կարգավիճակում: Փոխակերպվող հասարակությունում սոցիալ-տնտեսական գործընթացների հարափոփոխ բովանդակությունը, անձի մասնագիտական կյանքում արմատական փոփոխությունները անմիջականորեն ազդեցություն են գործում անձի արժեքային ոլորտի վրա:

Արժեքային ոլորտի հիմնախնդրին անդրադարձել են արտասահմանյան հետազոտողներ՝ Մ. Ռոկիչը, Շ Շվարցը, Է. Շպրաներգերը, Ռ. Ինգլհարդը, Ա. Մասլոուն, Գ. Օլփորթը, Վ. Ֆրանկլը և այլոք, ռուս հետազոտողներ՝ Վ. Գ. Ալեքսեևան, Գ. Մ. Անդրեևան, Լ. Ի. Անցիֆիրովան, Վ. Գ. Ասեևը, Ֆ. Ե. Վասիլյուկը, Ս. Ս. Բուբնյովան, Բ. Ի. Դոդոնովը, Դ. Ա. Լեոնտևը, Մ. Ս. Յանիցսկին, Ա. Վ. Սերին և այլոք:

Արժեքներն անձ և սոցիալական միջավայրի կապող օղակներ են: Անձն ունենալով որոշակի մասնագիտություն՝ յուրացնելով և իրացնելով իր մասնագիտական դերը՝ բոլոր բովանդակային տարրերով հանդերձ և գործունեություն ծավալելով որոշակի պայմաններում, յուրացնելով տվյալ մասնագիտական դերի ավանդույթները, նորմերն ու արժեքները, հայտնվելով մասնագիտական կարգավիճակի անկման պայմաններում, չի կարող չապրել հոգեկան խռովք, բախումներ, ֆրուստրացիաներ, չտագնապել իր ներկայի և ապագայի համար: Առավել ևս, երբ բացակայում են հոգեբանական հարմարման համար նպաստավոր պայմանները, ապա առաջ է գալիս արժեքային վերակառուցումների խնդիրը, որը առաջադրում է փոփոխվող իրականության վերաարժևորման և վերաիմաստավորման, արժեքային ոլորտի վերակառուցման անհրաժեշտություն:

Արժեքային ոլորտի խորքային փոփոխությունները ստիպում է անձին վերաիմաստավորել, վերաարժևորել այնպիսի հիմնային արժեքներ, ինչպիսիք են «կյանքը», «մասնագիտությունը», «աշխատանքը», «ազատությունը», «զարգացումը» և այլն: Այս ամենը առավել ցայտուն դրսևորվում է միջին տարիքի անձանց արժեքային ոլորտում:

Թեմայի ընտրությունը պայմանավորված է սոցիալական վարընթաց շարժունության պայմաններում հայտնված միջին տարիքի անձի արժեքաիմաստային ոլորտի բաղադրիչների վերակառուցումների, նորագոյացությունների ուսումնասիրության անհրաժեշտությամբ և գիտության մեջ սույն հարցի նվազ մշակվածությամբ:

Վարընթաց սոցիալական շարժունության պայմաններում հայտնված անձի արժեքային ոլորտի վերակառուցումների ուսումնասիրությունը թույլ կտա բացահայտել այս փոփոխությունների միտումները, անձի հարմարման ուղղվածությունը և հանձնարարականներ մշակել նման մարդկանց հետ արդյունավետ սոցիալ-հոգեբանական աջակցություն կազմակերպելու առումով:

Հետազոտության օբյեկտն է՝ մասնագիտական կարգավիճակի փոփոխության պայմաններում անձի արժեքային ոլորտի նորագոյացություններն ու տեղաշարժերը:

Հետազոտության առարկան է՝ անձի արժեքային ոլորտի վերակառուցումների հոգեբանական առանձնահատկությունները:

Հետազոտության նպատակն է՝ բացահայտել միջին տարիքի (40-60տ.) անձանց արժեքային ոլորտի վերակառուցումների առանձնահատկությունները՝ մասնագիտական կարգավիճակի փոփոխության և վարընթաց շարժունության պայմաններում:

Հետազոտության վարկածը. մասնագիտական կարգավիճակի վարընթաց շարժունությամբ փոփոխության պայմաններում՝ անձի արժեքային ոլորտը ենթարկվում է փոխակերպումների՝ ներառելով մի շարք նորագոյացություններ, որոնք պայմանավորում են անձի հոգեբանական հարմարվողականության բնույթն ու առանձնահատկությունները:

Ուսումնասիրության նպատակի իրականացման համար առաջ են քաշվել հետևյալ ***խնդիրները.***

1. Տեսական վերլուծության միջոցով բացահայտել արժեքային վերակառուցումների բնույթը մասնագիտական կարգավիճակի փոփոխության պայմաններում:
2. Բացահայտել մասնագիտական արժեքների նշանակության և իրացվածության աստիճանը մասնագիտական կարգավիճակի փոփոխության պայմաններում:
3. Ուսումնասիրել անձի իմաստային ոլորտի վերակառուցումները մասնագիտական կարգավիճակի փոփոխության պայմաններում:
4. Ուսումնասիրել անձի արժեքային տիպը՝ մասնագիտական կարգավիճակի փոփոխության պայմաններում:
5. Բացահայտել անձի արժեքային ոլորտի վերակառուցումների տարրերը մասնագիտության փոփոխության համատեքստում:
6. Բացահայտել անձի հարմարվողական կարողությունների բնույթը մասնագիտական կարգավիճակի փոփոխության պայմաններում:

Հետազոտության ընտրակազմը՝ ԵՊՀ հյուրերի տան, Հայաստանի պատմության թանգարանի, «Փոքր Մհեր» կրթահամալիր ՊՈԱԿ-ի, Գր. Նարեկացու անվան թիվ 137 դպրոցի, ինչպես նաև տրանսպորտի և սպասարկման ոլորտների 101 աշխատակիցներ:

Հետազոտության տեսամեթոդաբանական հիմք են ծառայել անձի արժեքաիմաստային ոլորտի շարժընթացի վերաբերյալ՝ Ս. Լ. Ռուբինշտեյնի, Ա. Ն. Լեոնտևի, Դ. Ա. Լեոնտևի, Ի. Վ. Կալինինի, Ա. Վ. Սերիի, Մ. Ս. Յանիցկու և այլ հետազոտողների մոտեցումները և հիմնադրույթները, Ս. Լ. Ռուբինշտեյնի, Բ. Գ. Անանևի, Ա. Ն. Լեոնտևի արժեքների և սոցիալական համակարգի փոխադարձ կապվածության վերաբերյալ տեսությունները, Ն. Ռ. Հակոբյանի անձի մարգինալ կարգավիճակի վերաբերյալ հիմնադրույթը, Ա. Ա. Նալչաջյանի անձի և սոցիալական խմբերի հոգեբանական հարմարման տեսություն, Լ. Դ. Ստոլյարենկոյի, Ա. Գ. Մակլակովի հարմարվողականության մասին հիմնադրույթները, Ս. Ս. Խուդոյանի անձի տարիքային ճգնաժամերի վերաբերյալ տեսությունը՝ կապված միջին տարիքի ճգնաժամերի հետ և այլն: Համակարգային հետազոտության ընթացքում կիրառել ենք հետևյալ մեթոդիկաները.

1. Մ. Ռոկիչի արժեքային կողմնորոշումների թեստը,

2. Ռ. Ինգլհարդի մոդիֆիկացված մեթոդիկան՝ ըստ Մ. Ս. Յանիցկու,

3. Ա. Գ. Մակլակովի և Ս. Վ. Չերմյանինի «Ադապտիվություն» բազմամակարդակ անձնային հարցարանը

4. Դ. Ա. Լեոնտևի կենսաիմաստային կողմնորոշումների մեթոդիկան

5. Մեր կողմից մշակված մասնագիտության փոփոխության գնահատման հարցաթերթիկը

Ստացված տվյալները ենթարկվել են համահարաբերակցային վերլուծության:

Հետազոտության գիտական նորույթը:

Բազմակողմանիորեն վերլուծության է ենթարկվել և վեր հանվել անձի արժեքային ոլորտի վերակառուցումները՝ մասնագիտական կարգավիճակի փոփոխության պայմաններում: Բացահայտվել են.

- անձի մասնագիտական արժեքների իրացվածության սահմանափակումը
- անձի մասնագիտական արժեքների տեղաշարժերը և նրանցով պայմանավորված նորագոյացությունները
- մասնագիտական կարգավիճակի փոփոխության պայմաններում անձի գերակա արժեքային տիպերը՝ միջանկյալ և հարմարման
- մասնագիտական վարընթաց շարժունության համատեքստում մշակվել է մասնագետ մարգինալի մասին պատկերացումը՝ իրեն բնորոշ արժեհամակարգի առանձնահատկություններով և հարմարման միտումներով:

Հետազոտության տեսական նշանակությունը:

Կատարված գիտահետազոտական աշխատանքի արդյունքները ընդլայնում են անձի արժեքաիմաստային ոլորտի վերակառուցումների շարժընթացի և ձևավորված նորագոյացությունների, անձի հարմարման միտումների մասին պատկերացումները՝ մասնագիտական կարգավիճակի փոփոխության համատեքստում: Ստացված արդյունքները կարող են ընդլայնել անձի և սոցիալական հոգեբանության տեսական շրջանակը:

Հետազոտության գործնական նշանակությունը:

Գիտահետազոտական ուսումնասիրության արդյունքները կարող են օգտագործվել բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնական գործընթացի գիտական կազմակերպման մեջ: Ատենախոսության նյութերը, մշակված գործնական առաջարկությունները կարող են օգտագործվել միջին տարիքի անձանց հետ աշխատող (մասնավորապես Զբաղվածության պետական գործակալության աշխատակիցների կողմից, որոնք աշխատում են մասնագիտության փոփոխության խնդրի առջև հայտնված անձանց հետ՝ նրանց մասնագիտական կողմնորոշման և վերակողմնորոշման հարցերում) անձնակազմի մասնագիտական պատրաստության, վերապատրաստման և որակավորման բարձրացման համար:

Պաշտպանության ներկայացվող հիմնական տեսական դրույթները:

1. Բացասական միտվածությամբ արժեքային վերակառուցումներն ընթանում են բարձրակարգ արժեքների տեղաշարժմամբ դեպի արժեքային համակարգի ցածր դիրքեր՝ հարմարման ցածրակարգ արժեքների գերակայմամբ կամ բարձրակարգ և ցածրակարգ

արժեքների համագոյակցմամբ, ինչը պայմանավորում է անձի արժեքային ոլորտի առանձնահատկությունները:

2. Միջին տարիքում անձի արժեքաիմաստային ոլորտի վերակառուցումները կապված են ոչ միայն տարիքային շրջափուլի առանձնահատկությունների հետ, այլ պայմանավորված են մասնագիտական կարգավիճակի փոփոխության (վարընթաց սոցիալական շարժունության) պայմաններով

3. Մասնագիտական կարգավիճակի վարընթաց շարժունության համատեքստում արժեքային ոլորտի շարժընթացում տեղ է գտնում մասնագիտական արժեքների իրացման սահմանափակության կամ «մասնագիտական արժեքների ֆրուստրացիայի» երևույթը:

4. Արժեքային ոլորտի բացասական միտվածությամբ վերակառուցումները հանգեցնում են անձի կողմից իրականության իմաստավորման գործընթացի թուլացմանը՝ արտահայտվելով կյանքի իմաստավորվածության ցածր մակարդակի մեջ:

5. Անձի արժեքաիմաստային ոլորտի վերակառուցումները նոր սոցիալական իրականության պայմաններում կրում են հարմարվողական բնույթ՝ պայմանավորելով անձ-սոցիալական միջավայրի կայունությունը և հարմարվողականության շղթան:

6. Մասնագիտական կարգավիճակի փոփոխության պայմաններում հայտնված անձը բնորոշվում է իբրև մասնագետ մարգինալ, որին բնորոշ է փոփոխվող սոցիալական, մասնավորապես, մասնագիտական փոփոխվող պայմաններում մարգինալ անձի հարմարվողական մարտավարություններն ու արժեհամակարգը:

Հետազոտության փուլերը:

Հետազոտության 1-ին փուլում /2010-2011թթ./ կատարվել է անձի արժեքաիմաստային ոլորտի, հարմարվողական հնարավորությունների, մասնագիտական և սոցիալական կարգավիճակին վերաբերող գրականության տեսական վերլուծություն, հետազոտության օբյեկտի և առարկայի ընտրություն, խնդիրների որոշակիացում, հետազոտության մեթոդաբանության, մեթոդների և մեթոդիկաների ընտրություն:

2-րդ փուլում /2011-2012 թթ./ իրականացվել է մասնագիտության փոփոխության պայմաններում անձի արժեքային ոլորտի վերակառուցումների ուսումնասիրություն:

3-րդ փուլում /2013-2014թթ./ կատարվել են հետազոտության տվյալների մշակումը, քանակական և որակական վերլուծությունները, ընդհանրացվել են արդյունքները, ձևակերպվել են եզրակացություններն ու գործնական առաջարկները, շարադրվել է ատենախոսությունը:

Հետազոտության փորձաքննությունը և տվյալների հուսալիությունը:

Ուսումնասիրության արդյունքների հավաստիությունն ապահովվել է հոգեբանական հետազոտություններին ներկայացվող պահանջներով, հիմնախնդրի համալիր տեսական վերլուծությամբ, ընտրված մեթոդաբանական սկզբունքներով, ատենախոսության նպատակին և խնդիրներին համապատասխան հոգեբանական գիտության և պրակտիկայի մեջ ընդունված մեթոդների և մեթոդիկաների կիրառությամբ, փորձարկվողների բավարար թվաքանակի ընտրությամբ: Հետազոտության արդյունքների հավաստիությունն ապահովվել է տվյալների մաթեմատիկական վիճակագրության մեթոդների մշակմամբ, ինչպես նաև քանակական և որակական համալիր հոգեբանական վերլուծությամբ:

Հետազոտության արդյունքները պարբերաբար քննարկվել են Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հոգեբանության տեսության և պատմության ամբիոնի նիստերում, հանրապետական և միջազգային գիտաժողովներում: Հետազոտական աշխատանքի վերաբերյալ հրատարակվել է վեց հոդված:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, գրականության ցանկից (104 անուն) և հավելվածներից:

Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է տպագիր 170 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, հիմնախնդրի մշակվածության աստիճանը, հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակը, գիտական վարկածը, նպատակից բխող խնդիրները, տեսական և մեթոդաբանական հիմքերը, հետազոտության մեթոդները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության հավաստիությունն ու հիմնավորվածությունը, պաշտպանության ներկայացված հիմնական դրույթները:

Աշխատանքի առաջին՝ **«Արժեքային համակարգի հիմնախնդիրը տարբեր գիտակարգերում»** գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին՝ «*Արժեքային ոլորտի բովանդակությունը, էությունը և առանձնահատկությունները»* ենթագլխում ներկայացված են հիմնախնդրի վերաբերյալ ռուս և արտասահմանյան հեղինակների մոտեցումներն ու առաջարկած դրույթները: Քննարկվում է «արժեք» հասկացության բնորոշումները տարբեր գիտակարգերում՝ սոցիոլոգիա, փիլիսոփայություն: Մանրամասն վերլուծության է ենթարկվում արժեքների և իմաստների, անձի կենսագործունեության մեջ դրանց դերի վերաբերյալ մի շարք հեղինակների՝ Մ. Ռոկիչի, Շ. Շվարցի, Զ. Ֆրոյդի, Ա. Ադլերի, Կ. Ռոջերսի, Ա. Մասլոուի, Լ. Ի. Բոժովիչի, Վ. Ա. Վասիլյուկի, Վ. Պ. Տուգարինովայի, Վ. Գ. Ալեքսեևայի, Ա. Գ. Ասմոլովի, Ֆ. Վ. Բասսինի, Բ. Ս. Բրատուսի, Պ. Յա. Գալպերինի, Բ. Վ. Զեյգարնիկի, Վ. Պ. Զինչենկոյի, Վ. Վ. Ստոլինի, Օ. Կ. Տիխոմիրովի, Դ. Ա. Լեոնտևի, Մ. Ս. Յանիցկու և այլոց հայացքները:

Երկրորդ՝ «*Անձի արժեքային ոլորտի վերակառուցումների հիմնախնդիրը»* ենթագլխում ներկայացված է անհատական և հասարակական արժեքային համակարգերի փոխհարաբերությունը, արժեքային վերակառուցումների պայմանները, արժեքների յուրացման մեխանիզմները, արժեքների դասակարգումները, արժեքային վերակառուցումների տարիքային ենթատեքստը, մասնավորապես միջին տարիքում, արժեքային վերակառուցումների պայմանավորվածությունը սոցիալական դաշտի փոփոխությունների հետ, իմաստային ոլորտի շարժընթացի հետ կապված որոշ հետազոտողների՝ Վ. Ի. Պանինի, Ռուբինշտեյնի, Ա. Ն. Լեոնտևի, Գ. Ա. Անդրեևայի, Ի. Վ. Կալինինի, Ա. Վ. Սերիի, Դ. Ա. Լեոնտևի, Մ. Ս. Յանիցկու, Յու. Գ. Լեբեդևայի և այլոց մոտեցումները: Քննարկվել է արժեքային ճգնաժամի հարցը, որպես արժեքային ոլորտում հակասական արժեքների համատեղման գործընթաց:

Երրորդ՝ «*Անձի արժեքային ոլորտի և հարմարվողական կարողությունների հարաբերակցությունը»* խորագրով ենթագլխում ներկայացված են գիտության մեջ

շրջանառվող հարմարման՝ կենսաբանական, սոցիալական, սոցիալ-հոգեբանական կողմերի հետ կապված Հ. Սելյեյի, Պ. Կ. Անոխինի, Ռ. Մ. Բաևսկու, Ֆ. Զ. Մեերսոնի, Վ. Ժ. Կազնաչեևի, Վ. Ի. Մեդվեդևի, Տ. Շիբուտանու, Ֆ. Ն. Բերյոզինի, Վ. Ա. Սլաստենինի, Վ. Պ. Կաշիրինի, Ս. Ա. Լարինայի, Ա. Ա. Նալչաջյանի մոտեցումները, հարմարվողականության որպես ինտերգրալային անձնային հատկության վերաբերյալ տեսական մոտեցումները, ինչպես նաև հարմարվողականության և անձի արժեքային համակարգի միջև փոխհարաբերության վերաբերյալ Տ. Ա. Գոլուբևայի, Ս. Տ. Պոսոխովայի, Ե. Ն. Կիսելնիկովայի, Լ. Գ. Պոպովայի, Ա. Ա. Նալչաջյանի, Լ. Ն. Սոբչիկի, Ա. Գ. Մակլակովի, Մ. Վ. Ռոստովցևայի, Օ. Վ. Կուզնեցովայի և այլոց հայացքները: Հայացքների տեսական վերլուծությունը ցույց են տալիս, որ փոփոխվող պայմաններում անձի հարմարվողականության մակարդակը կապված է անձի արժեքային վերակառուցումների բնույթի հետ: Ուստի այս ենթակառուցվածքների միջև առկա է երկկողմանի կապ:

Ատենախոսության երկրորդ՝ **«Անձի արժեքային ոլորտը մասնագիտական կարգավիճակի փոփոխության համատեքստում»** գլուխը ներկայացված է չորս ենթագլուխներով:

Առաջին՝ «*Անձի մասնագիտական կարգավիճակի փոփոխության հոգեբանական խնդիրը և արժեքային վերակառուցումները*» խորագրով ենթագլուխում քննարկվում է անձի սոցիալական կարգավիճակի, մասնավորապես մասնագիտական կարգավիճակի և մասնագիտության վերաբերյալ գոյություն ունեցող Ե. Ա. Անուֆրիևի, Ե. Ա. Կլիմովի, Ա. Գ. Ասմոլովի հայացքները: Մանրամասն քննարկվում է դերադիրքային տեսության հեղինակների՝ Ռ. Լինտոնի, Ռ. Մերթոնի, Ֆ. Բեյթսի, Ջոն Միդի, Ռ. Կրաուսի, Տ. Շիբուտանու և այլոց տեսակետները: Սոցիալական կարգավիճակի փոփոխությունը մեծապես ազդում է անձի կողմից աշխարհի ընկալման, ինքնավերաբերմունքի, ինքնագնահատականի վրա, առաջին հերթին դրսևորվում է անձի արժեքային կողմնորոշումների վերակառուցումների ձևով:

Երկրորդ՝ «*Անձի մասնագիտական կարգավիճակի փոփոխության պայմանների հոգեբանական վերլուծությունը*» խորագրով ենթավերնագրում ներկայացվում է մասնագիտական կարգավիճակի փոփոխությանը (անկմանը) նպաստող պայմանները, որին մանրամասն անդրադարձել են սոցիոլոգիայում Տ. Ի. Զասլավսկայան, Ս. Լ. Դանովսկին, Վ. Ն. Շուբկինը, Վ. Ա. Յադովը, Ա. Գ. Զդրավոմիսլևը, Մ. Ն. Ռուտկևիչը, Ֆ. Ռ. Ֆիլիպովը: Սոցիալական կարգավիճակի փոփոխության պայմաններից է անցումային հասարակությունը, որը բնորոշվում է սոցիալական կառույցների փոփոխությամբ, մասնագիտական կարգավիճակի տեղաշարժերով, ինչը հիմք է դնում մեկ այլ երևույթի՝ մարգինալության առաջացմանը, որը մանրամասն նկարագրված է Ն. Ռ. Հակոբյանի կողմից: Առավել խոցելի է միջին սերունդի անձը, որի կյանքի մի մասը անցել է խորհրդային համակարգում, ով բախվել է նախկին կարգավիճակը կորցնելու, արժեհամակարգը վերարժևորելու, վերաիմաստավորելու խնդրի հետ:

Երրորդ՝ «*Անձի մասնագիտական կարգավիճակի փոփոխության հոգեբանական առանձնահատկությունները միջին տարիքում*» խորագրով ենթավերնագրում ներկայացված է միջին տարիքի, ինչպես նաև միջին տարիքի ճգնաժամի վերաբերյալ մի շարք

հեղինակների՝ Կ. Յունգի, Ջ. Լևինսոնի, Գ. Շիխիի, Ա. Ա. Ռեանի, Մալկինա-Պիխի, Լ. Ն. Յուրևայի, Ս. Ս. Խուդոյանի և այլոց մոտեցումները: Տարիքային այս փուլն ունի իր յուրահատկությունները՝ կապված սեփական արժեքների, աշխարհայացքի, ընդհանուր կենսական դիրքի վերաիմաստավորման, վերաարժևորման հետ, որն ընթանում է նորմատիվ տարիքային ճգնաժամի սահմաններում: Մասնագիտական կարգավիճակը անձի կողմից ընկալվում է որպես կարևորագույն արժեք և նրա կյանքի իմաստի բաղադրիչներից է, ուստի սոցիալական վերակառուցումներով պայմանավորված մասնագիտական կարգավիճակի փոփոխությունը կանգնեցնում է հիմնային, առաջին հերթին մասնագիտական արժեքների վերաարժևորման խնդրի առջև՝ կապված նոր՝ ցածր կարգավիճակի առկայությամբ:

Չորրորդ՝ «*Մասնագիտական մարգինալությունը և անձի հարմարվողական միտումները*» խորագրով ենթագլխում անձի արժեքային վերակառուցումների խնդիրը քննարկվում է մարգինալության հիմնադրույթի համատեքստում: Ներկայացված են մարգինալության որպես բարդ սոցիալ-հոգեբանական ֆենոմենի վերաբերյալ Ռ. Փարկի, Է. Սթոունքվիսթի, Ս. Ա. Գլադիշևի, Լ. Մ. Բաննիկովայի, Զ. Կ. Գոլենկովայի, Լ. Ի. Դեմենտիի, Ն. Ռ. Հակոբյանի հայացքները: Մասնագիտական կարգավիճակի փոփոխությունը ենթադրում է մասնագիտական մարգինալության երևույթի առկայություն: Նման անձին բնորոշում ենք որպես «հետմասնագետ»՝ իրեն բնորոշ արժեքային ոլորտի առանձնահատկություններով:

Ատենախոսության երրորդ՝ **«Մասնագիտական կարգավիճակի փոփոխության պայմաններում անձի արժեքային ոլորտի վերակառուցումների հետազոտությունը»** գլուխը բաղկացած է երկու ենթագլուխներից:

Այս գլխի առաջին «*Հետազոտության մեթոդիկաների նկարագրությունը և մասնակիցների համակազմը*» ենթագլխում ներկայացված է հետազոտության կազմակերպումը, մեթոդաբանական հիմքերը, ընտրակազմը, մեթոդներն ու մեթոդիկաները և հետազոտության իրականացման փուլերը: Մեթոդների և մեթոդիկաների ընտրությունը պայմանավորված է ընտրված մեթոդաբանական հիմքերից. ուսումնասիրության առարկայից, նպատակից, խնդիրներից: Մեթոդներն ու մեթոդիկաները ընտրելիս հաշվի ենք առել հետևյալ չափանիշները. մեթոդի համարժեքությունը ուսումնասիրության օբյեկտին, խնդիրներին, վստահելիությունը, համապատասխանությունը գիտական հետազոտությունների ժամանակակից մակարդակին և հետազոտության տրամաբանական կառուցվածքին:

Հետազոտության ընթացքում տվյալները մշակվել են մաթեմատիկական-վիճակագրական առաջնային և երկրորդային վերլուծության մեթոդներով: Տարբեր փոփոխականների միջև համահարաբերակցային կապերը բացահայտելու համար օգտագործվել է Սպիրմենի կարգային համահարաբերակցության բանաձևը:

Երկրորդ՝ «*Մասնագիտական կարգավիճակի փոփոխության պայմաններում անձի արժեքային ոլորտի հետազոտության արդյունքների վերլուծությունը*» ենթագլխում ներկայացված է մեր կողմից մշակված մասնագիտության փոփոխության գնահատման հարցաթերթիկի տվյալները, որոնք թույլ են տալիս պատկերացում կազմել հետազոտվողի

վերաբերմունքի մասին ներկայիս և նախկին մասնագիտական կարգավիճակի, կյանքի որակի, դրանով բավարարվածության, աշխատանքային գործունեության մեջ սեփական պոտենցիալը ներդնելու մասին, ինչպես նաև ժամանակի իմաստավորման հարցերի վերաբերյալ:

Ստացված տվյալները ցույց են տալիս, որ նոր սոցիալական կարգավիճակի պայմաններում տեղի է ունենում «աշխատանք» հասկացության նշանակության փոխակերպում: Հետազոտվողների (86%) գերակշռող մեծամասնության համար այն գոյատևման միջոց է: Նկատվում է նախկին սոցիալական կարգավիճակից բավարարվածության և ներկայիս կարգավիճակից դժգոհության առկայություն հետազոտվողների 90%-ի մոտ: Փոփոխվող պայմաններին հարաբերական հարմարման մասին են վկայում հետևյալ հարցերի դրական պատասխանները. 43%-ը կյանքում իրենց տեղը համարում են ամուր, 22% -ը անորոշ են այդ հարցում, 32%-ը գտնում են, որ իրենց տեղը ամուր չէ: Հետազոտվողների ստվար զանգված (73%) ծրագրեր է կապում ապագայի հետ: Հետազոտվողների 65%-ը կարևորում է անցյալի հիշողությունները, 64%-ը գտնում են, որ կյանքում դեռ ամեն ինչ հնարավոր է փոխել, ինչը վկայում է մասնագիտության փոփոխության իրավիճակի ազդեցության թուլացման մասին: Շրջապատում տեղի ունեցող փոփոխությունները հետազոտվողների 39%-ը ընկալում են վախեցնող, իսկ 33%-ը՝ ուրախալի: Հետազոտվողների 91%-ը կարևորում են ապահովության զգացումը: Ընդհանուր առմամբ նոր կարգավիճակի պայմաններում անձի հոգեկանում վերակառուցումները չնայած ունեն հարմարման վեկտոր, այնուամենայնիվ, իրականության իմաստավորման ներկա փուլում, անձը սեփական կյանքի որակը գնահատում է ոչ բավարար (60%): Բարձրագույն և միջին մասնագիտական կրթություն ունեցող հետազոտվողների տվյալների միջև առկա է տարբերություն շրջապատում տեղի ունեցող փոփոխությունների նկատմամբ վերաբերմունքի առումով: Բարձրագույն կրթություն ունեցող հետազոտվողներին (52%)՝ փոփոխությունները վախեցնում են՝ ի տարբերություն միջին մասնագիտական կրթություն ունեցող հետազոտվողների խմբի, որոնց փոփոխությունները ուրախացնում են (40%): Կարելի է ասել, որ կրթական գործոնի ազդեցությունը կապվում է այն փաստի հետ, որ առանձին դեպքերում բարձրագույն կրթությունը թույլ է տալիս իրականության ավելի խորը իմաստավորման հնարավորություն, ուստի փոփոխությունների նախկին փորձի շնորհիվ ունեն «փոփոխություն» հասկացության նկատմամբ ընդգծված բացասական վերաբերմունք:

Ի տարբերություն տղամարդկանց (74%), որոնք վստահ են կյանքում փոփոխություն մտցնելու հարցում, կանանց խմբում դրական (50%) և բացասական (50%) պատասխանները հավասար են, ինչը հնարավոր է վկայում է կանանց հուզական լինելու, կամ կյանքում փոփոխություն մտցնելու նվազ պատրաստականության մասին: Առկա է տարբերություն նաև աշխատանքով բավարարվածության հարցում: Տղամարդկանց խմբում վախը փոփոխությունների նկատմամբ փոքր-ինչ գերակայում է:

Անձի արժեքային ոլորտի վերակառուցումների և ներկայումս արժեքների իրացվածության ուսումնասիրության նպատակով կիրառվել է Մ. Ռոկիչի արժեքային թեստը: Պարզվել է, որ առկա է տարբերություն հետևյալ արժեքների նշանակալիության և իրացվածության միջև. ակտիվ կենսագործունեություն, կյանքի իմաստություն, առողջություն, սեր, լավ ու հարազատ ընկերների առկայություն, հասարակության կողմից ընդունում, ճանաչողություն, զվարճանք, ազատություն, զարգացում, այլ մարդկանց երջանկություն, արարել, վստահություն սեփական ուժերում: Մասնագիտական ինքնահրացման խմբի արժեքների զգալի մասի իրացվածության և նշանակալիության միջև առկա է էական

տարբերություն. արժեքը անձի համար շարունակում է մնալ առաջնային, բայց նոր մասնագիտական կարգավիճակի պայմաններում դրանց իրացվածությունը կամ նվազ է, կամ բացակայում է: Վերջին փաստը մեզ թույլ է տալիս խոսել անձի արժեքային ոլորտում մասնագիտական արժեքների ֆրուստրացիայի երևույթի մասին:

Արժեքներ	**Ընդհանուր ընտրանք**		**բարձրագույն կրթ.**		**միջին մասն. կրթ.**		**տղամարդ**		**կին**	
	նշ.	իր.	նշ.	իր.	նշ.	իր.	նշ.	իր.	նշ.	իր.
Ակտիվ կենսագործունեություն	15	16	8	16	15	15	15	15	5	15
Կյանքի իմաստություն	8	9	12	1	8	8	5	8	8	10
Առողջություն	2	2	1	3	2	7	2	2	1	8
Հետաքրքիր աշխատանք	5	15	5	18	9	12	8	17	6	2
Բնության և արվեստի գեղեցկություն	13	7	13	11	12	9	16	9	15	9
Սեր	4	5	4	5	4	5	12	3	9	6
Նյութապես ապահովված կյանք	3	17	3	12	3	3	3	16	3	13
Լավ ու հարազատ ընկերներ	6	3	7	9	5	2	4	4	7	4
Հասարակության կողմից ընդունում	14	8	15	4	14	4	7	5	14	11
Ճանաչողություն	12	12	16	13	18	14	14	11	16	16
Արդյունավետ կյանք	7	10	18	15	7	6	6	14	13	14
Զվարճանք	18	18	11	17	17	18	18	18	18	18
Ազատություն	11	4	10	8	16	13	13	7	10	5
Զարգացում	10	14	14	6	11	10	9	13	11	7
Երջանիկ ընտանեկան կյանք	1	1	2	2	1	1	1	1	2	1
Այլ մարդկանց երջանկություն	17	11	17	7	10	11	17	12	12	12
Արարել	16	13	6	10	13	17	10	10	17	17
Վստահություն սեփական ուժերի մեջ	9	6	9	14	6	16	11	6	4	3

Աղյուսակ 1 **Մ. Ռոկիչի արժեքային մեթոդիկայի ռանգավորումը ողջ ընտրանքի և առանձին խմբերի համար**

Մեթոդիկայի տվյալները փաստեցին հետազոտվողների մոտ արժեքային ոլորտի վերակառուցումների հետևյալ միտումները. անձնային և հարմարման արժեքների գերակայություն: Արժեքային տեղաշարժերի արդյունքնում՝ մասնագիտական արժեքների տեղաշարժ դեպի արժեքային համակարգի ստորին դիրքեր և մասնագիտական ինքնաիրացման խմբի արժեքների չիրացվածություն՝ ֆրուստրացիա, ինչը արտահայտվում է մասնագիտական ինքնաիրացման խմբի արժեքների նշանակալիության և իրացվածության միջև էական տարբերության ձևով: Անձն իր կենսագործունեության ընթացքում կարող է կարևորել արժեքը, բայց տևականորեն չիրացվելու դեպքում, այն դադարում է լինել վարքի ուղենիշ: /տե՛ս աղյուսակ 1/:

Անձի արժեքային տիպի բացահայտման համար (ըստ Մ. Ս. Յանիցկու եռաստիճան մոդելի, որում ներառված են հարմարման, սոցիալականացման, հարմարման արժեքները) կիրառվել է Ռ. Ինգլհարդի մեթոդիկան՝ մոդիֆիկացված Մ. Ս. Յանիցկու կողմից:



Գրաֆիկ 1 **Ռ. Ինգլհարդի արժեքային մեթոդիկայի՝ մոդիֆիկացված ըստ Մ. Ս. Յանիցկու ցուցանիշները**

Մեթոդիկայի տվյալները ցույց են տալիս, որ հետազոտվողների շրջանում (40%), գերակայում են հարմարման արժեքային տիպով անձինք՝ ուղղված հասարակության մեջ գոյատևմանը, բարեհարմարությանը: Տեղի է ունենում ևս մեկ արժեքային վերակառուցում. բարձրակարգ «մասնագիտություն», «մասնագիտական ինքնաիրացում» արժեքը

փոխակերպվում է «աշխատանք», «գործ» հարմարման արժեքի՝ կորցնելով անձի համար իր առաջնային նշանակությունը: Երկրորդ ստվար խումբը (27%), միջանկյալ արժեքային տիպը, որը բնորոշվում է արժեքային համակարգի չկայացվածությամբ, նրանում հակասական արժեքների առկայությամբ, որը խիստ բնութագրական է փոփոխվող մասնագիտական պայմաններում հայտնված անձին, որը դժվարությամբ է կարողանում համատեղել նախկին և նոր սոցիալական կարգավիճակի հետ կապված արժեքները: Հետազոտվողների 26%-ը պատկանում է սոցիալականացման արժեքային տիպին: Նրանք կողմնորոշված են դեպի սեփական ընտանիքը, կարիերան, մերձավոր միջավայրը՝ կարևորելով շրջապատողների կարծիքը և հասարակական ընդունումը: Անհատականացման տիպն առկա է 7% հետազոտվողների մոտ: /տե՛ս գրաֆիկ 1/:

Հետազոտությունը փաստում է մասնագիտական կարգավիճակի փոփոխության պայմաններում անձի իմաստային ոլորտի աղքատացում, կյանքի իմաստավորվածության ցածր ցուցանիշի 93.6 առկայություն: Կիրառվել է Ստյուդենտի t-չափանիշը:



Գրաֆիկ 2 **Դ.Ա. Լեոնտևի կենսաիմաստային կողմնորոշումների (ԿԻԿ) մեթոդիկայի ցուցանիշները**

Դ. Ա. Լեոնտևի ԿԻԿ մեթոդիկայի բոլոր ենթասանդղակների ցուցանիշները՝ կյանքի իմաստավորվածություն, նպատակը կյանքում 31.5, կյանքի արդյունավետություն 22.3, կյանքի գործընթաց 26.9, ես-ի վերահսկողության լոկուս 19.7, կյանքի վերահոսկողության լոկուս 25.9՝ բավականին ցածր են: Ստացված տվյալները կարելի է մեկնաբանել՝ ելնելով Ա. Վ. Սերիի հայացքներից: Նա գտնում է, որ էքստրեմալ իրադրության մեջ իմաստային ոլորտի ձևափոխությունը կատարում է հարմարվողական գործառույթ: Բարձրագույն և միջին մասնագիտական կրթությամբ խմբերում առկա է տարբերություն «կյանքի վերահսկողության լոկուս» ենթասանդղակի միավորների միջև: Փաստորեն, բարձրագույն կրթությամբ հետազոտվողները իրենց զգում են «իրենց կյանքի տերը» և կարող են գտնել խնդիրների ինքնուրույն լուծումներ՝ անկախ արտաքին հանգամանքների:

Ըստ սեռային գործոնի՝ առկա է տարբերություն «նպատակը կյանքում» ենթասանդղակի տվյալների հետ: Ստացված տվյալները վկայում են, որ չնայած սոցիալական ցածր կարգավիճակի առկայության, տղամարդիկ՝ ի տարբերություն կանանց, բնորոշվում են ավելի մեծ նպատակաուղղվածությամբ: /տե՛ս գրաֆիկ 2/:

Ա. Գ. Մակլակովի և Ս. Վ. Չերմյանինի «Ադապտիվություն» հարցարանը կիրառվել է անձի հարմարվողականությունը գնահատելու համար:



Գրաֆիկ 3 **Ա. Գ. Մակլակովի և Ս. Վ. Չերմյանինի «Ադապտիվություն» հարցարանի ցուցանիշները**

Հարմարվողականությունը գտնվում է 1-2 պատի սահմաններում, ինչը ցույց է տալիս, որ մասնագիտական կարգավիճակի փոփոխության պայմաններում անձի հարմարվողական կարողությունները թուլանում են նոր պայմաններին տևական հարմարման արդյունքում: Արժեքային ոլորտի վերակառուցումները դառնում են հարմարման հիմնական մեխանիզմ: Հաղորդակցական կարողությունը և բարոյական նորմատիվությունը գտնվում են 3-4 պատի

սահմաններում: Նման անձինք հեշտությամբ են շփվում այլ մարդկանց հետ, իրենց վարքի մեջ կողմնորոշվում են ընդունված հասարակական նորմերով: Միջին մասնագիտական և բարձրագույն կրթությամբ խմբերում հետազոտվողների ցուցանիշները չեն տարբերվում: /տե՛ս գրաֆիկ 3/:

		Կրթության միջև տարբերություն Ստյուդենտի t-չափանիշ	Սեռերի միջև տարբերություն Ստյուդենտի t-չափանիշ
Ադապտիվություն	Հարմարվողական կարողություն	-1.837	0.460
	Նյարդահոգեկան կայունություն	-0.779	-0.836
	Հաղորդակցման կարողություն	-0.991	-0.492
	Բարոյական նորմատիվություն	-0.790	2.915**

P* ≤ 0,05 ; P** ≤ 0,01, P*** ≤ 0,001

Աղյուսակ 2 **Ա. Գ. Մակլակովի և Ս. Վ. Չեմյանինի «Ադապտիվություն» հարցարանի տվյալների վիճակագրական տարբերությունը խմբերի միջև**

Կանանց և տղամարդկանց խմբերում առկա է տարբերություն բարոյական նորմատիվության ցուցանիշներում. կանանց խմբում ավելի բարձր է՝ 5, քան տղամարդկանց մոտ՝ 4: Փաստորեն, իրենց սոցիալական վարքի մեջ, կանայք ավելի հակված են հետևել ընդունված նորմերին, քան տղամարդիկ: Իհարկե, նման ցուցանիշը կարելի է բացատրել ինչպես սեռային, այնպես էլ էթնիկական գործոններով:

Հայտնաբերվել են համահարաբերակցական կապեր Ռոկիչի արժեքային թեստի և Դ.Ա. Լեոնտևի ԿԻԿ մեթոդիկայի որոշ ենթասանդղակների միջև: Մ. Ռոկիչի թեստի դեպքում կիրառվել է խի-քառակուսին: Կյանքի իմաստության արժեքը համահարաբերակցվում է Դ. Ա. Լեոնտևի ԿԻԿ մեթոդիկայի «կյանքի» գործընթաց» ենթասանդղակի հետ (482.56): Հետաքրքիր աշխատանք արժեքը համահարաբերակցվում է «կյանքի արդյունք» ենթասանդղակի հետ (341.47), ինչը ցույց է տալիս, որ հետազոտվողների մոտ հետաքրքիր աշխատանք արժեքը կապվում է անցած ուղու իմաստավորման հետ: Բացահայտվել է համահարաբերակցական կապ նաև հարազատ ու լավ ընկերների առկայություն արժեքի և ընդհանուր ԿԻ (կյանքի իմաստավորվածություն) ցուցանիշի հետ (674.71): Այն ապացուցում է, որ սոցիալական միջավայրում ակտիվ գործառնության համար մարդուն անհրաժեշտ է շրջապատված լինել հարազատ և նշանակալի մարդկանցով: Ճանաչողության արժեքը համահարաբերակցվում է ընդհանուր ԿԻ (կյանքի իմաստավորվածություն) ցուցանիշի հետ (726.13):

Առկա է նաև համահարաբերակցություն արդյունավետ կյանք արժեքի և «նպատակը կյանքում» ենթասանդղակի միջև: Արդյունավետ կյանք արժեքը պատկանում է

մասնագիտական արժեքների դասին, իսկ Դ. Ա. Լեոնտևի ԿԻԿ թեստի «նպատակը կյանքում» ենթասանդղակը ցույց է տալիս անձի նպատակը կյանքում, ուղղվածությունը դեպի ապագան: Ուստի դրանց միջև կապը տրամաբանական է: Զվարճանքի արժեքը համահարաբերակցվում է «նպատակը կյանքում» ենթասանդղակի և ԿԻ (կյանքի իմաստավորվածություն) ցուցանիշի հետ (784.50): Այս փաստը թույլ է տալիս ենթադրել, որ առկա է կյանքի նկատմամբ որոշ հեդոնիստական ուղղվածություն: Բացահայտվել է նաև համահարաբերակցական կապ Մ. Ռոկիչի արժեքային թեստի վստահությունը սեփական ուժերի մեջ արժեքի և Դ. Ա. Լեոնտևի «նպատակը կյանքում» (415.21) և «ես-ի վերահսկողության լոկուս» (341.13) ենթասանդղակների միջև, ինչը փաստում է, որ հետազոտվողների մոտ սեփական ուժերի մեջ վստահության արժևորումը մեծապես կապվում է սեփական կյանքը վերահսկելու իրողության հետ:

Հայտնաբերվել են համահաբերակցական կապեր Ա. Գ. Մակլակովի և Ս. Վ. Չերմյանինի «Ադապտիվություն» մեթոդիկայի տվյալների և Մ. Ռոկիչի թեստի տվյալների միջև: Առկա է ուժեղ համահարաբերակցական կապ առողջություն արժեքի և հարմարվողական կարողությունների (650.97) միջև, ավելի թույլ են հաղորդակցական կարողության (282.73), հետաքրքիր աշխատանք (220.17), բնության և արվեստի գեղեցկություն արժեքի (200.55) և բարոյական նորմատիվության ենթասանդղակի հետ համահարաբերակցական կապերը: Բացահայտվել է համահարաբերակցական կապ լավ ու հարազատ ընկերների առկայության արժեքի և նյարդահոգեկան կայունության ենթասանդղակի միջև (688.95): Այս կապը կարելի է բացատրել անձի և սոցիալական միջավայրի փոխազդեցության տեսանկյունից:

Ստացված հետազոտական տվյալները ամբողջացրեցին և հաստատեցին մասնագիտական կարգավիճակի փոփոխության պայմաններում հայտնված անձի արժեքային ոլորտի վերակառուցումների բնույթը, արժեքային ոլորտի բովանդակությունը և դրանցով պայմանավորված անձի հարմարվողական կարողություններն ու միտումները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Անձի արժեքային ոլորտի վերակառուցումը օրինաչափ երևույթ է անձի զարգացման ընթացքում: Վարընթաց սոցիալական շարժունությամբ պայմանավորված մասնագիտական կարգավիճակի փոփոխության պայմաններում տեղի են ունենում անձի արժեքային ոլորտի բացասական միտվածությամբ վերակառուցումներ, որոնք ընթանում են բարձրակարգ արժեքների տեղաշարժմամբ դեպի արժեքային համակարգի ցածր դիրքերը՝ ցածրակարգ հարմարման արժեքների գերակայությամբ կամ բարձրակարգ և ցածրակարգ արժեքները համատեղելու գործընթացով, ինչն ուղեկցվում է արժեքային բախմամբ:

2. Սոցիալական ուղղահայաց վարընթաց շարժունությամբ պայմանավորված մասնագիտական կարգավիճակի փոփոխության պայմաններում արժեքային ոլորտի վերակառուցումները կրում են օրինաչափ բնույթ: Նկատվում է ոչ միայն անձի արժեքային համակարգում առաջնային արժեքների տեղաշարժ, այլ նաև դրանց նշանակության

պահպանման դեպքում իրացման հնարավորության բացակայություն կամ սահմանափակություն, ինչը բնորոշում ենք իբրև «արժեքային ֆրուստրացիա»:

3. Մասնագիտական կարգավիճակի փոփոխության պայմաններում գերակայում է հարմարման արժեքային տիպը՝ փաստելով, որ արժեքային վերակառուցումներն ունեն հարմարման վեկտորը: Բացահայտվեց, որ որ արժեքային տիպը կախված է կրթական գործոնից. բարձրագույն կրթություն ունեցող հետազոտվողների մեծամասնությունը պատկանում է միջանկյալ կամ խառը արժեքային տիպին, ինչը բնորոշվում է արժեքային համակարգի չկայացվածությամբ, բարձրակարգ և ցածրակարգ արժեքներն իրար հետ համատեղելու բարդ գործընթացով: Հոգեկան այս իրողությունները «հետմասնագետի» կամ «մասնագետ մարգինալի» անձի ելակետային բնութագրեր են:

4. Մասնագիտական գործունեությունը, մասնագիտական ինքնաիրացումն անձի կյանքի իմաստի կարևոր բաղադրիչներից է, որի իմաստավորումն առավել սուր բնույթ է ստանում միջին տարիքում: Այս պայմաններում բացասական միտվածությամբ արժեքային վերակառուցումները հանգեցնում են արժեքային ոլորտի պարզեցմանը՝ մեծապես պայմանավորելով անձի կողմից իրականության իմաստավորման գործընթացի թուլացումը, ինչը արտահայտվում է ընդհանուր կյանքի իմաստավորվածության ցածր ցուցանիշներում:

5. Անձի հարմարման ձևը մեծապես կապված է արժեքային վերակառուցումների բնույթի հետ: Երբ հետազոտվողների արժեքային ոլորտում գերակայում են հարմարման արժեքները, իսկ մասնագիտական ինքնաիրացման խմբի և բարձրակարգ արժեքները արժեքային համակարգում զբաղեցնում են ցածր դիրքեր, արժեքային վերակառուցումը բնորոշվում է իբրև ամբողջական: Այն դեպքում, երբ հետազոտվողների արժեքային ոլորտը բնորոշվում է ցածրակարգ և բարձրակարգ արժեքների համատեղմամբ, արժեքային վերակառուցումը մասնակի է: Ուստի ելնելով արժեքային վերակառուցումների բնույթից՝ առանձնացնում ենք հարմարման երկու ձև. ներքին, որն ընթանում է արժեքային ոլորտի ամբողջական վերակառուցմամբ և խառը, որն ընթանում է արժեքային ոլորտի մասնակի վերակառուցմամբ:

6. Տևական հարմարումը նոր ոչ մասնագիտական, ցածր որակավորմամբ գործունեության պայմաններին, ինչը ուղեկցվում է արժեքային վերակառուցումներով, հանգեցնում է անձի հարմարվողական կարողության թուլացմանը:

7. Միջին տարիքը արժեքային վերագնահատումների և կյանքի վերաիմաստավորման ժամանակաշրջան է: Աշխատանքի փոփոխությունը մարդու կյանքի տվյալ ժամանակահատվածում ապրվում է հատկապես սուր կերպով: Նախկինում բարձր կարգավիճակ զբաղեցրած «հետմասնագետի» մոտ նկատվում է կենսական ծրագրերի չիրացվածություն, մասնագիտական ինքնաիրացման կասեցում, ինչն ուղեկցվում է անընդհատ զայրույթի, տագնապի, ապաթիայի, անհեռանկարայնության, դժգոհության զգացմունքներով:

8. Մասնագիտության փոփոխության պայմաններում անձի արժեքային ոլորտում փոխակերպման է ենթարկվում աշխատանքի արժեքի առաջնային նշանակությունը՝ ինքնաարտահայտման և զարգացման միջոցից վերաարժևորվելով հարմարման գոյատևման միջոցի:

Ատենախոսության հիմնական բովանդակությունն արտացոլված է հեղինակի կոմից հրատարակած աշխատանքներում.

1. Վարդանյան Ս.Հ., Հակոբյան Ն.Ռ. Անձի սոցիալական կարգավիճակի արժեզրկման պայմանների տեսական վերլուծություն, Միջբուհական կոնսորցիումի «Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ», N 2, Երևան, «Զանգակ» 2012, էջ 73-82

2. Վարդանյան Ս.Հ., Հակոբյան Ն.Ռ. Перестройка ценностной сферы личности при снижении социального статуса, Միջբուհական կոնսորցիումի «Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ», N 1, Երևան, «Զանգակ» 2014, էջ 58-66

3. Վարդանյան Ս.Հ. Մասնագիտական մարգինալությունը սոցիալական կարգավիճակի փոփոխության պայմաններում, Գիտական տեղեկագիր N 2, Երևան 2014, էջ 37-44

4. Վարդանյան Ս.Հ. Միջին տարիքի անձի մասնագիտական կարգավիճակի անկման հոգեբանական առանձնահատկությունները, Կանթեղ, գիտական հոդվածներ 2016, էջ 177-187

5. Վարդանյան Ս.Հ. Կյանքի իմաստավորվածության խնդիրը մասնագիտական կարգավիճակի անկման պայմաններում, Вестник Российско-армянского университета N 2, 2016, 15 165-174

6. Վարդանյան Ս.Հ., Հակոբյան Ն.Ռ. Մասնագիտության փոփոխության պայմաններում անձի հարմարվողականությունը և մասնագիտական վերակողմնորոշման միտումները, Միջբուհական կոնսորցիումի «Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ», N 3, Երևան, 2016. էջ 124-133

ВАРДАНЯН СЕДА АМАЯКОВНА

ПЕРЕСТРОЙКИ ЦЕННОСТНОЙ СФЕРЫ ЛИЧНОСТИ В УСЛОВИЯХ ИЗМЕНЕНИЯ ПРОФЕССИОНАЛЬНОГО СТАТУСА

Диссертация на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.01- Общая психология, теория и история психологии, психология личности. Защита диссертации состится 05 июня 2018 г. в 13:00 на заседании специализированного совета по психологии 064 ВАК по присуждению учених степеней при Армянском государственном педогогическом университете им. Х. Абовяана, по адресу: 0010, Ереван, ул. Тиграна Меца 17.

РЕЗЮМЕ

Актуальность. В условиях современного общества статусная мобильность имеет широкое распростронение. В настоящее время более широкие масштабы имеет нисходящая социальная мобильность, когда представители различных профессий оказываются в пограничном, переходном статусе. В мобильном обществе изменчивый характер социально-экономических процессов, кардинальные изменения в профессиональной деятельности личности имеют непосредственное воздействие на ценностную сферу личности. В связи с этим возникает необходимость изучения перестройек ценностной сферы личности в условиях изменения профессионального статуса.

Цель исследования. определить особенности перестроек ценностей сферы людей среднего возраста (40-60 лет.) в условиях изменения профессионального статуса и нисходящей мобильности.

Гипотеза исследования. В условиях нисходящей мобильности профессионального статуса ценностная сфера личности претерпевает трансформации, включая ряд новообразований, которые определяет сущность психологической адаптивности личности и ее особенности.

Для исследования цели мы поставили перед собой следующие задачи

1. Определить сущность перестройки ценностой сферы в условиях изменения профессионального статуса при помощи теоретического анализа.
2. Исследовать степень реализации и значимости профессиональных ценностей в условиях изменения профессионального статуса.
3. Исследовать изменения смыслового поля в условиях изменения профессионального статуса.

4. Исследовать ценностый тип личности в условиях изменения профессионального статуса.
5. Определить структуру изменения системы ценностей личности в контексте изменения профессионального статуса.
6. Определить сущность адаптивности личности в условиях изменения профессионального статуса.

Научная новизна исследования.

Были всесторонне проанализированы и выделены перестройки ценностой сферы личности в условиях изменения проефессионального статуса. Мы пришли к следующим выводам:

- Ограниченность реализации профессиональных ценностей личности
- Мобильность профессиоанльных ценностей личности и обусловленные этим новообразования
- Доминантные типы ценностей личности – это смешанный и адаптивный в условиях изменения профессионального статуса.
- В контексте мобильности понижения профессионального статуса было разработано представление и специалисте-маргинале, с характерными ему особенностями системы ценностей и характер адаптивности.

Теоретическая значимость исследования*:*

Проведенные научно-исследовательские работы расширяют представления о процессе мобильности системы ценностей личности и появляющихся новообразованиях в контексте изменения профессионального статуса. Полученные результаты могут расширить теоретическую базу психологии личности и социальной психологии.

Практическая значимость исследования:

Результаты научно-исследовательской работы могут быть применены в высших учебных заведениях в организации научного процесса. Материалы диссертации, разработанные практические материалы могут быть использованы в работе с людьми среднего возраста (в частности со стороны сотрудников государственной Службы занятости, которые работают с людьми, оказавшимися перед проблемой смены профессии, их профессиональной ориентации и переориентации) с целью повышения качества подготовки профессиональной пригодности и повышения квалификации.

Структура и объем диссертации: Диссертация состоит введения, трех глав, гипотез и практических предложений, списка литературы [104 имен]. В работу включены 8 таблиц и 3 графика. Диссертация имеет 4 приложения.

VARDANYAN SEDA HAMAYAK

PERSSONAL VALUES' TRANSFORMATION IN TERMS OF CHANGES OF PROFESSIONAL LEVEL

ABSTRACT

Dissertation for acquiring psycologcal science degree. Area of specalization: 19.00.01 "General psychology, Theory and History of Psychology, Personality Psychology"
The dissertation defense will be held on the 05 of June, 2018. At 13:00 at
Armenien State Pedogogical Univercity after KH. Abovyan during the session of
Functioning HCC Psycology 064 Spesialized Council
Adress: 17, Tigran Mets str., Yerevan 0010, Armenia

Actuality of the research. In terms of modern society level transformation is widespread. It may also have upward stage (social mainstreaming) and downgrading (social downgrading). Currently downgrading transformation has wider scales, it is when representatives of various professions appear in average near-border level. In the mobile society the changing nature of social economic processes, personal reasons of professional activity changes have a direct impact on personal values. Therefore, a necessity appears to research the restructuring personal values in terms of professional level changes.

Target of research is the change of professional level in terms of transformation of personal values.

Research hypothesis. In terms of decreasing transformation of professional level personal values suffer changes including a variety of new formations, which define the nature of psychological flexibility of a person and its peculiarities.

Research objectives

1. To define the nature of personal values restructuring in terms of changing the professional level with the help of theoretical analysis.
2. To define the significance of professional values and the extent of their realization in terms of changing the professional level and to research changes of semantic space in terms of professional level changes.
3. To research the type of personal values in terms of changing of the professional level.
4. To define the structure of changing the system of personal values in the context of changing the professional level.

5. To define the nature of the ability to be flexible in terms of changing the professional level.

Scientific novelty of research is:

The changing of personal values in terms of professional level transformation were properly analyzed and marked.

- Limitation of professional values' realization
- Professional values' transformation and the new formations due to it
- Dominant types of personal values are average or mixed and flexible in terms of changing the professional level.
- A notion about a fringe specialist was developed with specific peculiarities of personal values and goals of being flexible in the context of professional level transformation.
- Importance of theoretical research*:*

The scientific research made expands knowledge of the process of professional level transformation and appearing new formations in the context of changing the professional level. The results of the research may help to widen the theoretical scope of personal and social psychology.

Practical significance of the research:

The results of the scientific paper may be used at high schools while organizing the scientific process. The materials of the thesis, practical results may be used while working with middle-aged peolpe (especially by officers of State Labor Department, who deal with those who face the problem of changing the profession, and on their career guidance and re-orientation) aimed at improvement of quality of competency and advance training.

Structure of the thesis: The paper consists of Introduction, three chapters, hypothesis and practical issues, a list of literature that contains 104 sources. The paper includes also 8 tables and 3 charts.

On the topic of the thesis 6 articles were published.